

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Յ Ե Ղ Ի Ր
ՀԱԿՈԴԱՅԻՆ ՅԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԶԵԽՆԱՐԿ «ՊԱՏՐԱՍՏ ՀՈՔՊ»-Ի
ՆՈՐՄԱՆԵՐԻ ՀԱՆՉՆՄԱՆԸ
ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

623.459

15 - 16

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Յ Ե Ղ Ի Ր Փ Ե Ս Ո Ւ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1936

21 JUN 2013

15.5.66

04 AUG 2010

Պրակտիստներ բալու յերեսների, մթացեց

623.459
Մ-16

Պ Ա Տ Ր Ա Ս Ց Ե Ղ Ի Բ
ՀԱԿՈԴԱՅԻՆ ՑԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԶԵՐՆԱՐԿ «ՊԱՏՐԱՍՏ ՀՈՔՓ»-Ի
ՆՈՐՄԱՆԵՐԻ ՀԱՆՉՆՄԱՆԸ
ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՑ Ա. ՄԱԼՅԵՆԿԻ

ՅԵՐԵՎԱՆ ԽՐԱՏՎԱԿՈՒՐՅՈՒՆ



Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Բ Ա Ր Ա Կ Զ Ա Բ Ի Թ Յ Ո Ւ Ն
Ց Ե Բ Ո Վ Ա Ն Ց 1936

Պատ. խմբագիր՝ Մ. Դավիթյան
Քարգմանից՝ Հ. Մկրտչյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան
Սրբագրիչ՝ Ա. Արքակյան

Սռաջիկ նորմա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ Ե Մ Ա. 1. ՊԱՇԱՎԻԱՔԻՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱԿՈԴԱՅԻՆ ՅԵՎ
ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մենք սոցիալիզմ ենք կառուցում և պաշտպանում ենք խողա-
ղության գործը: Մակայն մեզ շրջապատող բոլոր պետություններում
իշխանությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքում: Ցերկարատե-
ճանաժամի հետևանքով իմպերիալիստների լազերում խիստ սրվել ե-
պայքարը յերկրագնդի վերաբաժնման համար: Իմպերիալիստները
տեսդորեն սպառազինվում են, ավելացնում են բանակները, անընդհատ
կատարելագործում են մարտական տեխնիկան, պատրաստվելով պա-
տերազմի՝ ամենից առաջ ԽՍՀՄ դեմ: Առանձնափես ուժեղ չափով
զարգանում են ռազմական ավիացիան, տանկերը յեվ ֆիմիան: Խիստ
աչքի յե ընկնում ումբաձիգ ավիացիայի, — հեռավոր թիկունքների
վրա հարձակվելու այդ հիմնական միջոցի, — արագ աճումը: Արդեն
կան ոմբակիրներ, վորոնք բարձրացնում են մինչև 12 տոնն սումբ
և ընդունակ են ողում մնալու 7—8 ժամ, ունենալով մի ժամում մոտ
200 կիլոմետր թուչքի արագություն: Քիմիան ավիացիային զինել ե-
թունավորող և հրձիկ նյութերով: Այս հանգամանքը խիստ ավելաց-
րել ե ավիացիայի մարտական ուժը, հնարավորություն տալով վա-
րակելու թունավորող նյութերով ընդարձակ տարածություններ, ողի
հսկայական ծավալներ և բազմաթիվ հրդեհներ առաջացնել վոչ միայն
անմիջականորեն ռազմաճակատում, այլ յեվ հեռավոր թիկունքում:

Մեր մեծ հայրենիքի աշխատավորները պետք ե վաղորոք պատ-
րաստված լինեն ողային թշնամու հարձակումներից պաշտպանվելու
համար: Այդ պաշտպանությունը պետք ե այնքան լավ կազմակերպ-
ված լինի գեռեւս խաղաղ ժամանակ, վոր քաղաքները, արդյունաբե-
րությունը, գլուղատնտեսությունը, ելեկտրակայանները, տրանսպոր-
տը և այլն կարողանան անխափան շարունակել իրենց աշխատանքը
հակառակորդի ողային հարձակման ժամանակ:

Հակառակորդի ողային տորմզի գեմ պայքարելու միջոցներն ու
միջոցառումներն ամբողջությամբ առած կազմում են հակողային

Հրատարակ. 3859
Գլավ. լիտոր Ա-1182
Գուտիր 1075
Տիրաժ 10,000

Հանձնված և արտադրության ճ-ին սեպտեմբերի, 1936 թ.
Ստորագրված և սպազրելու 14-ին սեպտեմբերի, 1936 թ.
Պետհրատի ապարան, Յեղեգան II Գնունի, 4

պաշտպանությունը (ՀՈՊ): Նըա կարեորագույն մասերից մեկը համազիսանում և այն թունավորող նյութերից (կրծատ՝ «ԹՇՆ») պաշտպանությունը, վոր գործադրում և ավիացիան, այսպես կոչված հակաքիմիական պաշտպանությունը (ՀՔՊ).

Պատերազմի գելքում հակողային պաշտպանության առաջին խնդիրը կլինի պայքարել հակառակորդի ողային տորմղի գեմ՝ իր ռմբաձիգ ավիացիայի միջոցով, հարձակվելով հակառակորդի աերոգրումների վրա և իր կործանիչ սավառնակներով ոդում վոչչացնելով թշնամու ավիացիան: Ամրացնելով իր ոդային տորմիղը, Խորհրդային Միության աշխատավորներն ստեղծում են հակառային պաշտպանության ամուր հիմքը:

Ոգնելով ոդային տորմիղն, հակողային պաշտպանությունը կկատարի իր յերերորդ խնդիրը՝ այն և, բոլոր միջոցներով խանգարել հակառակորդին ոդային հարձակումներ կատարելու: Դրա համար հակոդային պաշտպանությունն իր արամագրության տակ ունի հատուկ հակողային (զենիթացին) հրետանի, զենիթային գնդացրեր և այլ կրակային ու դրանց ոժանդակող միջոցներ:

Սակայն յեթե հակառակորդի ոդային ուժերի մի մասը ճեղքի ձակատը և գրոհի այս կամ այն բնակավայրը, ապա հակոդային պաշտպանությունը պետք է պատրաստ լինի կատարելու իր յերերորդ խնդիրը՝ նվազեցնել այն ֆնամները և կորուստները, վոր կարող և հասցնել թիկունքն անցած ոդային թշնամին, և արագորեն վերացնել հարձակման հետեանքները: Այս նպատակով հակոդային պաշտպանությունն ոգտվում է հակաքիմիական, հակահրեհային և սանիտարական պաշտպանության զանազան միջոցներով, ապաստարաններով՝ վորոնք պատապարում են ոդային ոռումքերի ներգործությունից, բողարկումով և այլն:

Պաշավիաքիմը հակոդային և քիմիական պաշտպանության (ՀՈՔՊ) բնագավառում պարտավոր ե՞լ 1) հակագաղեր տարածել բնակչության մեջ և սովորեցնել նրանցից ոգտվիլու ճեղը. 2) վերացնել աշխատավոր բնակչության հակոդային և քիմիական անդրագիտությունը՝ «պատրաստ ՀՈՔՊ»—ի նորմաները հանձնելու միջոցով. 3) կաղմակերպել տներում, բնակվարձկոպաններում, դպրոցներում, մանր ձեռնարկություններում և հիմնարկներում պաշտպանական ակտիվ ինքնապաշտպանության խմբակներ, սովորեցնել այդ խմբակները և շենքերը պատրաստել հակոդային և քիմիական պաշտպանության համար:

«Պատրաստ ՀՈՔՊ»—ի նորմաներն ընդգրկում են այն գիտելիքները և ունակությունները, վորոնց ԽՍՀՄ ամեն մի աշխատավոր պետք և տիրապետի ամենամոտ ժամանակում, վորակեսղի կարողանա

կազմակերպված գիմավորել ողա—քիմիական վտանգին, առահովել անընդհատ աշխատանքն իր ձեռնարկության մեջ թշնամու ողային հարձակման պայմաններում և կարողանա արագորեն վերացնել հարձակման հետևանքները: Յուրաքանչյուր աշխատավորի պարագն ե՝ լինել Պաշավիաքիմի շարքերում, ակտիվորեն մասնակցել բնակչության հակոդային և քիմիական պաշտպանությանը, ինքն ևս պետք և անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ ձեռք բերի հակոդային և քիմիական պաշտպանության վերաբերյալ:

Բ Ե Մ Ա. 2. ՈԴԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ռմբաձիգ ավիացիան հարձակումների ժամանակ գործ և ածում ավիացիոն ոռումքեր և հարվածելու հատուկ միջոցներ:

Ավիացիոն ոռումքերը ստորաբաժանվում են հետևյալ հիմնական տիպերի՝ ֆուգասային, բեկորային, քիմիական (ԹՆ պարունակող) և հրձիգ:

Ֆուգասային ոռումքերը լցնում են խիստ ներգործող պայթուցիկ նյութերով, վորոնք ծառայում են կառուցվածքներն ավելելու համար, Այդ ոռումքերի քաշը զանազան և լինում, սկսած 50 կիլոգրամից մինչև 2000 կիլոգրամ, ընդ վորում ոռումքի քաշի կիսից ավելին կազմում և պայթուցիկ նյութը՝ 50—150 կգ քաշ ունեցող ոռումքերը կարող են ավելել քաղաքային և արզյունաբերական տիպի կառուցվածքները:

Բեկորային ռաւմբերը նշանակվում են կենդանի նպատակները հարվածելու համար: Ռումբը գետնին ընկնելով պայթում և, տալով բազմաթիվ բեկորներ, վորոնք կարող են սումբի պայթման աեղից 50—300 մետր հեռավորության վրա սպանել կամ վիրավորել: Այս տիպի ոռումքի քաշը լինում է 8-ից մինչև 50 կիլոգրամ:

Քիմիական ռումբերը լցնում են մարտական թունավորող նյութերով: Այս ոռումքերը լինում են բախական և հեռակայական գործողության: Առաջինները պայթում են գետնին դիպչելիս, յերկորդները՝ պայթում են ոգում մինչև գետնին հասնելը: Կայուն թունավորող նյութերով լցված բախական ռումբերը (այսինքն՝ այնպիսի ԹՆ, վորոնք իրենց հարվածող աղդեցությունը վայրում պահպանում են մի քանի ժամվագական գործությունը), գըլ-խավորապես, գործադրվում են վայրը վարակելու համար և սովորաբար փոքր քաշ են ունենում 10—15 կիլոգրամ: Սյովիսի մեկ ոռումքը վարակում է 300—500 քառակուսի մետր տարածություն: Զուգուկցված ֆուգասային ոռումքերի հետ նման ողաքիմիական ռումբերը սովորաբար գործադրվում են թիկունքային կետերի ոմբակուման համար, վորովհետև ԹՆ (սովորաբար իպրիտ՝ մաշկը վերքուող նյութ)

Հավագանց կդժվարեցնեն ավելիված ոբյեկտների վերականգնման աշխատանքները:

Հեռակայական ուսմբերը կայուն և անկայուն թունավորող նյութերով կարող են մեծ չափեր ունենալ՝ 100 և ավելի կիլոդրամ։ Նրանք գործադրվում են թե վայրը թունավորելու և թե կենդանի ուժը հարվածելու համար։ Պայթելիս նրանք տալիս են թն բազմաթիվ մանրիկ կաթիլներ և մառախուղ՝ վարակելով ողի զգալի տարածություն և թն անձրևով պատելով մեծամեծ տարածություններ։

Հրձիք ուսմբերը հանդիսանում են թիկունքի վրա հարձակում գործելու ամենաազգու միջոցներից մեկը։ Նրանք գլխավորապես լըցքում են տերմիտային խառնուրդով (էերկաթաթթվուտի, կավահողի և փոշենման ալյումինի խառնուրդ)։ Տերմիտն այրվելիս տալիս են մինչև 3000 աստիճան ջերմություն։ Այրվող տերմիտը չի կարելի ջրով հանդցնել։ Հանգցնելու լավագույն միջոցը՝ ավաղն ե։ Հրձիք ուսմբերի քաշը փոքր և լինում, մեկ կամ մի քանի կիլոդրամ։ Մեկ ոմբաձիք սավառնակ կարող և վերցնել մի քանի հարյուր և նույնիսկ հազարից ավելի այդպիսի ուսմբը։

Հարվածելու հատուկ միջոցների շարքին ե պատկանում հեղուկ թն փոշիացնելը հատուկ անոթներով։ Այդ անոթներն իրենցից ներկայացնում են մետաղյա յերկարածև ամաններ, վորոնց կախ են տալիս սավառնակի թերելի կամ մարմնի տակ։ Այդ ամանները սովորաբար լցնում են իպրիտով։ Պահանջված ըսպեցին թն անոթից դուրս են թափվում խտացրած ողի ճնշման ոգնությամբ, կամ այլ միջոցներով, փոշիանում են, զառնում են մասրիկ կաթիլներ և անձրեկի պես ընկնում են գետին։ Սովորական ոմբակիրն այդպիսի անձրևով կարող և ծածկել մի քանի հեկտար տարածություն։ Թն մառախուղը շատ վասակար և թոքերի և աշքերի համար։ Թն կաթիլներով հողը վարակված և մնում մի քանի ժամ։

Բացի դրանից, սավառնակները կարող են նրանց վրա դրված հատուկ գործիքների միջոցով նետել մանր ապակե անոթներ (ամպուլներ)՝ լցված թն։ Ցերը բացում են այդ գործիքի հատակը, ամպուլներն ընկնում են գետին և փշրվում են, իսկ նրանց միջև թն շաղ և գալիս, հարվածելով մարդկանց և վարակելով վայրը։

ԹԵՄԱ. 3. ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱՋԵԼ ԹՆ

Հակաքիմիական պաշտպանության անհրաժեշտ միջոցառումներն ու միջոցները ժամանակին կիրառելու համար պետք ե կարողանալ թն ճանաչել ողում, գետնի և զանազան առարկաների վրա նրանց հոտով, արտաքին հատկանիշներով, նրանց գրգուչ ազդեցությամբ և այլն։

Իսկ ինչպես ճանաչել զանազան տեսակի թն։

Իպրիտը գեղնավուն կամ գորշ գույնի յուղանման հեղուկ ե։ Նրա գոլորշիներն անգույն են։ Հոտը թույլ ե, անդուրեկան, հիշեցնում ե սխտորի կամ մանանեխի հոտը։ Ռումբի պայթյունը խուլ ե, ձագարը փոքր ե, բեկորները խոշոր են, ուռմբի մարմնի զգալի մասը պահպանվում ե։ Իպրիտի գոլորշիները հոտառության և շնչառության որգանների վրա գրգուչ ազդեցություն չեն գործում։ Իպրիտի մուգ յուղանման կաթիլները կամ բեկորը իպրիտի լավ զգացվող հոտով շատ պարզ նկատվում են տների պատերի, ասֆալտի, բուսականության վրա և այլն։ Իպրիտի կաթիլներից ձյունն ստանում ե գեղնավուն—գորշ գույն։ Իպրիտի հեռակայական ոռմբերի պայթման ժամանակ չորս կողմն են թուչում մեծ քանակությամբ բեկորներ, ողում առաջանում են մուգ շերտեր՝ բաղկացած թն մանրիկ կաթիլներից, վորոնք արագորեն նստում են գետնին։ Իպրիտը սավառնակից փոշիացնելու ժամանակ սավառնակի պոչի տակ առաջանում ե թն մի մուգ շերտ, վորը լավ յերեւմ ե մի քանի վայրկյանի ընթացքում։

Լյուիզիտը սուր հոտ ունեցող գորշ գույնի հեղուկ ե, վորը հիշեցնում ե խորդենու տերմեների հոտը։ Լյուիզիտի գոլորշիները ներշնչելու դեպքում արագ սուր ծակոց և սկսվում աչքերի և քթի մեջ և կոկորդը գրգուում ե։ Լյուիզիտով վարակված բուսականությունը գորշ—կարմիր գույն և ստանում։ Ավիացիան լյուիզիտը գործադրում ե ճիշտ նույն յեղանակներով, ինչ և իպրիտը։

Ցոսգենը մի անգույն գագ և՝ յուրահատուկ անախորժ հոտով։ Ցերը ողում փոսկենի քանակը քիչ ե, նա ունենում ե թուլ անախորժ հոտ, վորը հիշեցնում ե փթած մրգի հոտը։ Ցերը նրա քանակը շատ ե, ունենում ե սուր, գրգուիչ հոտ։ Փոսկենով լցված խոշոր ավիառումբի պայթելու դեպքում առաջանում ե մի մեծ ծանրաշարժ ամպ, վորը դանդաղորեն շարժվում ե քամու ուղղությամբ։

Քլորպիկրինը ծանր դեղնավուն հեղուկ և՝ սուր գրգուիչ հոտով, վորը հիշեցնում ե բաղլինջի (թախտաբիթի) հոտը։ Ամենից առաջ ներգործություն են զգում աչքերը, վորից սուր ցավ և առաջանում աշքի կոպերի մեջ և արցունք և հոսում։ Քլորպիկրինի գոլորշիներն անգույն են։

Աղամսիտը կարծր նյութ ե, վորը մուգ-կանաչավուն փոշու կամ դեղնա-կանաչավուն գույնի կտորների տեսք ունի, առանց հոտի կամ թույլ-սիրտ խառնող հոտով։ Ցեկորային քիմիական ոռմբերի միջոցով աղամսիտի մարտական գործադրության գեղքում առաջանում ե մի գոչ մեծ, արագ ցնդող, մուգ-դեղնավուն կամ գորշ գույնի ծուխ։ Այդ ծուխը ներշնչելու դեպքում համարյա միանգամից քթի և կոկոր-

գի մեջ զգացվում ե ուժեղ զրգիռ, վորը հազ, փոշոց և սրտախառնություն ե առաջացնում:

Հակադաղը հազած ժամանակ թ՛ն կարելի յի նաևաշել հետեւյալ ձեռվ. խորն արտաշնչել և այնուհետև գիմակի ուստինը ականջների մոտ մատներով փոքր ինչ բարձրացնել, զգուշությամբ մի քիչ ներշնչել քթով: Բաց թողնելով դիմակի ուստինը՝ ուժեղ արտաշնչել, մատներով սեղմելով արտաշնչման կլապանը: Յեթե չհաջողվի միանդամից զգալ թ՛ն հոտը, նորից պետք ե կրկնել ամբողջ գործողությունը:

Թ Ե Մ Ա 4 և 5. ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ ՈԴԿԱՑԻՆ ՅԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ
ՎՏԱՆԳԻ ԱԶԴԱՆԸՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԴԵԳՐՈՒՄ

Ողային հարձակման մասին բնակչությունը նախազգուշացվում է «ողային տագնապ» (ՈՏ) ազդանշանով քաղաքի վրա հակառակորդի սավառնակի հայտնվելուց 15—20 րոպե առաջ: Ազգանշանը տըրվում ե գործարանային և յերկաթուղային շահների, շեփորների, (սիրենների) ընդհատվող սուլոցներով, սաղիոյի և հեռախոսի միջոցով և այլ առաջուց պայմանավորված յեղանակներով, վորոնց մասին պետք ե զիտենա շրջանի վողջ բնակչությունը:

Ողային տագնապ (ՈՏ) ազդանշանով ՀՈԲՊ—ի խմբակների կազմի մեջ մտնող բոլոր անձինք պետք ե ներկայանան իրենց հավաքակայանները: Ի՞նքնապաշտպանության խմբակների կազմի մեջ մտնող բոլոր անձինք ներկայանում են իրենց խմբակների հավաքակայանները, յեթե ՈՏ ազդանշանն այդ անձինք լուրմ են տանը կամ մոտակալում: Ձեռնարկություններում, յերկաթուղիներում, եկեկարուկայաններում, աշխատանքը չի ընդհատվում. բանվորները ու ծառայողները, բացառությամբ ՀՈԲՊ—ի խմբակների կազմի մեջ մտնողներից, մնում են իրենց տեղերում և շարունակում են իրենց աշխատանքը: Առեւրական ձեռնարկությունները, ճաշարանները ընդհատում են իրենց աշխատանքը և միջոցներ են ձեռնարկում պահպանելու պարենը, խարը և այլ ապրանքները թ՛ն ներգործությունից. հաճախորդները մնում են այդ շենքերում մինչև ավարտ («ողային տագնապն անցավ») ազդանշանի տրվելը կամ տեղափոխվում են մոտակա ապաստարանները: Կուլտուր—լուսավորական հիմնարկությունները՝ թատրոնները, կինոները և այլն դադարեցնում են իրենց գործունեյությունը, հանդիսականները տեղափորվում են ազատ շենքերում՝ համաձայն ազմինստրացիայի ցուցումների: Կրթական հիմնարկները և ամեն տեսակի հիմնարկներ, բացի նրանցից, վորոնք մասնակցում են բնակավայրի ՀՈՊ—ի սիստեմում, գաղարեցնում են իրենց աշխատանքը: Դասաստունները, ծառայողները, աշակերտները և այլն մնում են այդ հիմնարկների և ձեռնարկների շենքերում: Փողոցի արանոպրտի (տրամ-

վայ, ավտոբուսներ և այլն) շարժումը մասնակիորեն գաղարում ե տրանսպորտային միջոցները և նրանց մեջ գտնվող ուղևորները թագնվում են կամ ոգտագործվում են ՀՈՊ—ի ծառայության համար, համաձայն ՀՈՊ—ի հերթապահ մարմինների և միլիցիայի ցուցումների: Այն քաղաքացիները, վորոնք ՈՏ ազգանշանի ժամանակ տաննեն վնասում, անմիջապես հանգցնում են վառարանները և բուխարիկները (պլիտաները) պրիմուսները և նավթի վառարանները (կերոսինկաները), փակում են բոլոր ծխնելուցները, ողանցքները, պատուհանները, դռնելուցները: Յեթե տան մեջ կա հակաքիմիական տեսակետից սարքավորված սենյակ, ապա այնտեղ են ուղարկում յերեխաններին և հիվանդներին: Գիշեր ժամանակ պետք ե անհապալ լույսը հանգցնել կամ պատուհանները մթնեցնել անթափանց վարագույրներով կամ փեղկերով: Պարենը ծածկել արկղներում և ամաններում: Հագուստեղենը, սպիտակեղենը, ամանեղենը պահել պահարաններում, սնդուկներում և այլն: Բոլոր դեպքերում ձեռքի տակ ունեցած հակագաղերը գրվում են «պատրաստի» դրության մեջ: Անպահմանորեն պետք ե հանգստություն պահպանել, ամեն կերպ պայքարել իրարանցման, շփոթվածության և խուճապի գեմ:

Ի՞նչ պետք ե անել «բիմիական վտանգ» ազդանեանի դեպքում

Ողային հակառակորդի կողմից քիմիական միջոցներ գործադրելու դեպքում հատուկ պոստերը տալիս են «քիմիական վտանգ» ազդանշանը (ձեռքի շեփորների, սիրենների, սուլոցներ, հաճախորդի հարվածներ սելսի կոտրներին, զանգերի զողանց): Այս ազդանշանը ցուց ե տալիս, վոր այն տեղամասը, վորտեղից տրվում ե ազդանշանը յենթարկվել և քիմիական հարձակման և վարակված ե: Առանց հակագաղի և պաշտպանական հագուստի այլտեղ մնալը վտանգավոր ե կյանքի համար:

«Բիմիական վտանգ» ազդանշանի դեպքում պետք ե անմիջապես հակագաղը հագնել և չհանել մինչև հիմնարկի տան ազմինստրացիացից կամ ՀՈՊ—ի ծառայության կազմին պատականող անձնավորություններից ցուցումների տանալաւը: Յեթե ազդանշանը լսել ես փողոցում և հակագաղը մոտդ չի, ապա պահել շնչառությունդ, փակիր բերանդ և քիմի թաշկինակով, փեշով կամ թեքով և արագ մտիր մոտակա տունը. այնտեղ ցուց կտան թե վորտեղ պետք ե թաղնվել:

Ի՞նչ պետք անել հագուստի կամ մարմենի վրա թ՛ն կարիլներ կամ բծեր հայտնաբերելու դեպքում

Կասկածելի հոտ առնելու դեպքում թեկուզ և մինչև «քիմիական վտանգ» ազդանշանը պետք ե անմիջապես հակագաղը հագնել և

ուանալ այդտեղից: Հագուստի, կոշիկի և մարմնի վրա թ.Ն կաթիներ կամ բծեր հայտնաբերելիս պետք ե անմիջապես, առանց քսմսելու, բամբակով կամ լաթով հեռացնել թ.Ն: Յեթե ձեռքի տակ ջուր կա, լվանալ թունավորված տեղը: Առաջին հնարավորության գեղքում ուղերդել գեղի առաջին ողնության կամ սանիտարական մշակման կայանը (ամեն մի միջոներ, զոնապահ կարող ե ցույց տալ այդ կայանի տեղը): Մոտ չգնալ այն տեղերին, զորտեղ գրած են գեղին ցուցիչներ կամ գեղին լապտերներ «վարակված ե» մակարությամբ և զորտեղ գեղին դրոշակները ցույց են տալիս, վոր այդ վայրը վարակված ե թ.Ն:

Ի՞նչ պետք է անել նրբենից յեզ որպային հարձակումից տուժածներ ունենալու դեպքում

Հրդեհ ծագելու գեղքում պետք ե անմիջապես տեղեկացնել մոտակա հրշեց խմբին և յեթե տուժածներ կան, բժշկական կայանին: Յուրաքանչյուր աշխատավոր պետք ե իր ծոցատերում դրած ունենա մոտավոր հրշեց խմբի, բժշկական կայանի, միլիցիայի և ՀՈԲՊ-ի քաղաքամասի հեռախոսի համարները: Մինչև հրշեց խմբի կամ սահմարների գալը պետք ե իրենք հնարավոր միջոցները ձեռք առնեն հրդեհը հանդցնելու, տուժածներին անհետաձգելի ողնություն ցույց տալու համար ե այլն:

Յերբ ՀՈԲՊ-ի տեղական մարմինները կհամոզվեն, վոր հակառակորդի սակառնակներն արդեն հեռացել են, տրվում ե «ավարտ» աղդանշանը զործարանային շչակների յերկարածիկ սուլոցներով, նույնպես և ուղիուի և հեռախոսի միջոցով:

Եերկրորդ նորմա

ՎԱԿԱԳԻՇԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թ Ե Մ Ա. ԲԵ ԵՆ ՀԱԿԱԴԱԶԻ ՆՇԱՆԱԿՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարտական թունավորող նյութերից անձնապես պաշտպանվերու հիմնական միջոցը հակառակն ե: Նա թ.Ն ներգործությունից պաշտպանում և շնչառության որդանները, աչքերն ու դեմքի մաշկը:

ԲԵ ԵՆ հակագաղը բաղկացած ե հետեւյալ մասերից:

Հակագաղին տուփից՝ կլանիչով, պտուտակավոր փողակից և ներշնչման կլապանով: Կլանիչը բաղկացած ե հատուկ յեղանակով մշակված փայտածուխից («ակտիվացրած» ածուխ), մի քանի այլ նյութերից և բամբակից: Կլանիչի նշանակումն ե թունավոր նյութերից զանել այն ողը, վորը շնչում ե հակագաղից ոգտվող մարդը:

Տուփի ստորին կափարիչի կլոր անցքի մեջ մտցրած ե մետաղյա խցան՝ կտրուններով: Խցանի գամմիկի վրա հագցված ե ուետինե բոլորակ: Դա ներենչման կլապանն ե: Ներշնչելիս կլապանը փոքր ինչ բարձրանում ե և դրսի ողը ներս ե մտնում տուփի մեջ, իսկ արտաշնչելիս՝ պինդ փակում ե խցանի կտրունները և թույլ չի տալիս, վոր արտաշնչած ողը յետ դառնա տուփի միջով: Արտաշնչած ողը դուրս ե գալիս հատուկ՝ արտաշնչման կլապանի միջով:

Հակագաղի տուփի վերին կափարիչն ունի փողակ, վորի վրա ամրանում կամ պտուտակվում ե միացնող ուետինի խողովակը:

Յեռածունեկ խողովակը ծառայում ե կորդակ դիմակը ուստինի խողովակի հետ միացնելու և արտաշնչման կլապանն ամրացնելու համար:

Արտաշնչման կլապանը հակագաղի ամենանուրբ, հեշտ վնասվող մասն ե: Կլապանը մի տափակ ուետինի պարկ ե. ստորին մասում այդ պարկն ունի յերկու անցք, վորոնց միջով գուրս ե գալիս արտաշնչած ողը:

Ներշնչման ժամանակ կլապանի պատերը ներս ընկնելով, պինդ կպչում են միմյանց և փակում են արտաքին թունավորված ողի մուտքը գեղի կորդակ դիմակը: Վնասվածքներից պաշտպանելու համար արտաշնչման կլապանը պարփակված ե մետաղե շրջանակի մեջ:

Կորդակ դիմակը պատրաստվում ե չորս չափսի: Կորդակը ուստինից ե, ունի ապակյա ակնոցներ գրված մետաղյա շրջանակների մեջ. ունի նաև մեկ մատնանման պտուկ, վորը ծառայում ե ակնոցները մաքրելու համար, յերբ նրանք քրտնում են:

Պայօւսակը ծառայում ե հակագաղը կրելու և պահելու համար, պատրաստվում ե բրեգենդից կամ մի այլ ամուր կտորից (յերենի փոխարինվում ե հատուկ հարմարանքով՝ կարգած կտորե փոկերից): Պայօւսակն ունի յերկու բաժանմունք, մեծը յերկաթալարի նեցու կով հակագաղի տուփի համար ե, իսկ փոքրը՝ կորդակ դիմակի համար ե: Մեծ բաժանմունքում զսպանակը ապահովում ե ողի ազատ մուտքը գեղի հակագաղի ներքեի մասը՝ առանց առափը պայօւսակից դուրս հանելու:

Նոր հակագաղ ստանալու ժամանակ պետք ե տուփը պայօւսակից հանել պոկել խցանը փակող կարտոնե բոլորակը և յետ պտուտակերով հանել վերեկի փողակի մետաղե թասակը: Դրանից հետո միայնող խողովակը պտուտակել տուփի փողակին:

Հակագաղը գլուրաբեկ գործիք ե, վորը իիստ հոգատար վերբերմունք և պահանջում, հակառակ դեպքում սա փշանում ե և զարգում ե թ.Ն պաշտպանելուց: Հակագաղը չի կարելի պահել խիստ տաքացած տեղերում (վառարաններին, շոգու ջեռուցման խողովակ-

ներին մոտիկի) կամ չի կարելի ձմեռը դնել չտաքացվող շենքերում։ Շատ վասակար ե խոնավությունը։ Յեթէ հակագազը ընկել ե անձրևի տակ, ապա անհրաժեշտ ե հանել պայուսակից, խնամքով սրբել և չորացնել պայուսակից անջատած։ Ոգտվելուց հետո խնամքով սրբել կորդակի ներսի կողմը և յեռածունկ խողովակի այն ներքին ծայրերը փորոնց վրա ամրացված են կորդակ դիմակը և արտաշնչման կլապանը։ Վոչ մի դեպքում պայուսակի մեջ չի կարելի կողմնակի առարկաներ դնել։

Թ Ե Մ Ա. 7. ԲԵ ԵՆ ՀԱԿԱԳԱԶԻՑԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ԶԵՎԸ

Հակագազ կրելու յերեք գրություն կա 1) «յերթային», 2) «պատրաստի» և 3) «մարտական»։

Յերթային դրույթամբ հակագազ կրում են այն ժամանակ, յերբ հակառակորդի քիմիական հարձակման վտանգ չկա։ Այս դրության մեջ պայուսակը հակագազի հետ պետք ե լինի ձախ կողքին, փոկը պետք ե ձգված լինի աջ ուսի վրայից։ Պայուսակի վերին յեղը պետք ե լինի գոտկի բարձրության վրա։ Պայուսակի կլապանը պետք ե կոճկված լինի։ Թելը պետք ե անցկացնել ձախ ողակի միջով, փաթաթել և տեղափորել պայուսակի մեջ։ Պայուսակի փոկի վրայից կարելի յե հագնել զինասարքը, հրացանը, կոլը (սկատիլան), իրերի տոպրակը և այլն, բայց չի կարելի հակագազը կրել թիկնոցի, գրատի (շինելի) և վերարկույի տակից, վորովհետև այդ դեպքում հակագազի հագնելը շատ դժվար կլինի և շատ ժամանակ կպահանջի։

«Պատրասի» դրույթամբ հակագազը կրում են այն ժամանակ, յերբ սպասվում ե քիմիական հարձակում և կամ յերբ այդ հարձակման վտանգը հավանական ե ամենամոտիկ ժամանակում։ «Պատրաստի» գրության մեջ պայուսակի կլապանը բացված ե, գլխարկը պատրաստված ե արագ հանելու (կղակն ազատված ե գլխարկի փոկից, կապերից, ականջնոցներից և այլն), թելը հանված ե պայուսակից, արձակված ե մարմնի շուրջը և պինդ կապված ե աջ ողակից այնպես, վոր հակագազը չկարողանա շարժվել կողքի վրա, յերբ մարդ քայլելիս լինի։

«Մարտական» դրույթամբ հակագազ կրում են գետնի վրա կամ շրջապատող ողում թ.ն հայտնաբերելու բոլոր դեպքերում։ Հակագազը «մարտական» գրության ե դրվում կասկածելի հոտ հատնաբերելու պես և «քիմական տագնապի» աշդանշանի դեպքում։ «Մարտական» գրությամբ կորդակ դիմակը հապցրած ե լինում գլխին, իսկ գլխարկը՝ դիմակի վրայից։ Մնացածը նույն ե, ինչ վոր պատրաստի գրության ժամանակ։

Հակագազը «մարտական» գրություն փոխելու համար հարկավոր

ե պահել շնչառությունը և ազատել ձեռքերը, Դիմակը հագնելու համար պետք ե բութ մատներով բռնել լենթածնոտային մասի հաստ լեղբի դրսից, իսկ մյուս մատներով՝ ներսից։ Դիմակը մոտեցնել դեմքին, առաջ տալ ծնոտը և մտցնել դիմակի մեջ և մատները դիմակի յեղբերով շարժելով ներքելից վերև բութ մատով և ցուցամատով բարձրացնել զլիարկը (շգոցիկից բռնած), Շարունակելով զլիարկը մատներով պահել գլխի վրա, դիմակը քաշել գլխին և հագնել զլիարկը։ Զախ ձեռքի բութ մատով սեղմել արտաշնչման կլապանը, իսկ աջ ձեռքի մատներով սեղմել միացնող խողովակը յեռաբերան փողակի մոտ և ուժեղ արտաշնչել։

Հակագազը հագած պետք ե շնչել համաշափ և սակավ, բայց խոր կերպով, պետք և շնչել քթով։

Հակագազը պետք ե հանել աղղանշանով կամ «հանել հակագազը» հրամանով, հնակյալ կերպ, Ազատել ձեռքերը, ձախ ձեռքը լինի յեռաբերան փողակի վրա այնպես, վոր բութ մատը և ցուցամատը կարողանան բանել նաև դիմակի կոկորդակը։ Աջ ձեռքով բարձրացնել գլխարկը, իսկ ձախ ձեռքը յեռաբերան փողակի հետ միասին տալ առաջ ու վերև, այնպես վոր ճնոտն ազատվի դիմակից և աղա դիմակը հանել զլմից։ Մածկել գլխարկը, Դիմակը շուռ տալ, լավ ցամաքացնել նրա ներսի մասը, ակնոցների շրջանակները և յեռաբերան փողակի վերին հավելամասը, վորից հետո դիմակը վորոշ ժամանակ թողնել բաց վիճակում, վոր վերջնականապես ցամաքի (ձմեռ ժամանակ զնել կռնատակին)։ Աջ ձեռքով դիմակը բռնել ակնոցներից, իսկ ձախ ձեռքով վերին հաստ յեզրից։ Դիմակի հավելվածը պետք ե լինի աջ ձեռքի կողմը (դիմակի պատերը ծալված են, մատնանման հավելվածը տեղափորված և դիմակի ներսում)։ Մալել դիմակը յերկայնությամբ, ծածկելով աջ ապակին և լայնությամբ՝ ծածկելով ձախ ապակին յեռաբերան փողակի մոտ՝ դեպի յեզրը։ Զախ ձեռքով միացնող (ծալազարդ) խողովակը դնել պայուսակի փոքր բաժանմունքը, մինչեւ հատակին հասնելը, իսկ աջ ձեռքով նրա վրայից դնել յեռածունկ փողակը՝ դիմակի հետ միասին (արտաշնչման կլապանն ուղղել զեպի ձախ, հակագազի յենթածնոտային մասը գտնվում ե վերևում)։

Թ Ե Մ Ա. 8. ՀԱՍԱՐԱԿ ԳՈԶԱՊԱՍԱՐԱՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Գաղապատարանի համար լնարում են սակավ դուռ և պատռան ունեցող սենյակ, ամուր պատերով և ծածկով։

Ապատարանն արտաքին ողի համար անթափանց զարձնելու համար պետք ե հատակի, պատռահանների, գռների պատերի և առաստաղի բոլոր ձեղբերը ծածկել (ծեփել)։ մածիկով (գամակայով), յուղաներկով։ Ամուր փակել վառարանների կափարիչները և դռնակնե-

ըլ Հյութի մեջ խթմած մահուդի կտորներով կամ ֆլանելով։ Դոճների բացվածքների կողերից մինչև թաղիք, մահուդի զոլեր, ավտոմոբիլի հին կամերայի ռետին։ Վերջնականապես կախնել ավելորդ գոճներն ու պատուհանները։ Պատուհանների ապակիներին լրագրի թուղթ փակցնել (խաշածեղ շերտերով), վորպեսդի ոռումբի պայման դեպքում ոդի ցնցումից ապակիները չփշվեն։ Պատուհանների համար պինդ փակվող փեղկեր պատրաստել։

Այս ձևով սարքավորված սենյակն անթափանցելի յե արտաքին ոդի, հետևաբար և թն համար, վորպիսին գտնվում ե ոդի մեջ։ Սակայն պետք ե նկատի ունենալ, վոր արտաքին ոդը մուտք չի ունենա, և ապաստարանից ոգտվող մարդիկ պետք ե ջնշեն միայն այն ոդը, վորը կա ներսում։ Այդ ոդը պետք ե մաքուր լինի և այնպիսի քանակությամբ, վոր բավականացնի ապաստարանից ոգտվելու ամբողջ ժամանակվա ընթացքում (մեկ մարդու համար մեկ ժամում պահանջվում ե յերկու խորանարդ մետր ոդ)։ Ոդը մաքուր պահելու և խնայողաբար ծախսելու համար անհրաժեշտ ե, վոր վոչ մի այլ իր, բացի յերեխանների մնունդից և հիվանդների զեղորաքից, ներս չտարվի ապաստարան։ Զծիել և պրիմուս կամ նավթավառ (կերոսինկա) չվառել։ Յեթե ելեկտրական լուսավորություն չկա, ամեն մի սենյակում վառել վոչ ավելի, քան մեկ մոմ կամ փոքր ճրագ։ Խուսափել ամեն տեսակի ավելորդ շարժումներից, չաղմկել։

Թ Ե Մ Ա. 9. ԻՆՉՉԵՍ ԴՈՒՐԱ ԳԱԼ ՎԱՐԱԿԱՆԾ ՎԱՅՐԻՑ

Սպառնալից գոտում ապրող ամբող քաղաքացիական ընակչությանը հնարավոր չե հայթայթել հատուկ պաշտպանական հագուստ, վորը պաշտպանում ե կայուն թունավոր նյութերի (կթն) մաշկապատշական ներգործությունից։ Այդպիսի հագուստ, իբրև կանոն կունեսան միայն զորքերը և ՀՈՊ—ի ծառայությունը տանող խմբերը։ Մնացած ընակչությունն անհրաժեշտության դեպում ստիպված կլինի կթն վարակված շրջանից դուրս գալ ոգտվելով բոլոր մատչելի միջոցներից, վորպեսզի խուսափի վարակված գետնին, առարկաներին և այլն, շփվելուց։ Ռւստի, բոլոր գեղքերում, յերբ այդ թույլ են տալիս հանգամանքները, պետք ե շրջանցել վարակված տեղամասերը, պետք ե փռվածքների ոգնությամբ անցքեր բանալ այդպիսի տեղերում, և առանձին գեղքերում պետք ե այդ անցքերը դադարացնել։ Անցքերի փռվածքները և գաղանանումը, իբրև կանոն կը կատարեն ՀՈՊ—ի քիմ-խմբերը և ինքնապաշտպանության խմբակների քիմոզակները։ Փռվածքների համար կարելի յե ոգտագործել վառելափայտը, նրա վրա տախտակներ շարելով, պարզապես կարելի յե ոգտագործել գերաններ, շպաններ, ֆաներկայի կտորներ՝ շավիդի ձեռք շա-

բելով։ Կարելի յե շաղ տալ ավազ, հող և այլ նյութեր։ ձմեռ ժամանակ կարելի յե շաղ տալ ձյուն։

Վարակված շրջաններից դուրս գալու գործը կաղմակերպում են քիմիստակները և քիմոլակները։ Մնացած քաղաքացիները պետք ե անառարկելիորեն կատարեն նրանց բոլոր կարգադրություններն ու ցուցումները։

Ամեն քաղաքացի պետք ե ձեռք առնի հետևյալ անձնական նախազգուշական միջոցները. պետք ե հագնի կրկնակոշիկներ, յեթե կրկնակոշիկ չունի, կոշիկները պետք ե փաթաթի լաթերով, վոտնատակերին կապի տախտակներ։ Սովորական հագուստի վրայից պետք ե հագնի յերկրորդ ձեռք հագուստ կամ նրա առանձին մասերը։ Թևքերի ծայրերը և շալվարի տոտերը պետք ե պինդ կապել թելերով։ ոձիքը պետք ե կոճկել, վիզը կաթաթեթել շարփով, սրբիչով, ձեռքի թաթերը պաշտպանել հաստ ձեռնոցներով։ Կանանց և յերեխաններին հանձնարարվում ե վատները պաշտպանել մի քանի զուրդ գուլպաներով, ծնկներից վերև հաստ տրիկոտիվ, ամուր կապելով ծնկների մոտ։ Հագնել հակագազը, հսկ յեթե հակագազ չկա՝ շնչել բերնին և քթին կպցրած մի քանի ծալ ծալած թաշկինակի կամ բարձի յերեսի միջով, նախապես թաշկինակը ջրում թթվելով և փոքր ինչ մղելով։

Վարակված տեղամասով շարժվելիս խստորեն պահպանել այն հերթը, ուղղությունը և հեռակայությունները, վոր ցուց են տալիս վարակված շրջանից դուրս գալու գործը կաղմակերպող անձինք։ շարժվել առանց ուշանալու, արագ, բայց վոչ վաղելով։ զուրս չգալ այն շերտի սահմանից, վորը նշանակված ե խափանիչ նշաններով։ Հետեւ, վոր հագուստը չդիմչի շենքերի պատերին, թփերին, խոտին և այլն, վոչ մի իր գետնից չբարձրացնել։ Դուրս գալով վարակված տեղամասից, հանել հակագազը և վոտներին փաթաթած լաթերը այն անձանց ցուցումներով, վորոնք զեկավարում են յելումուտը վարակված տեղամասից և յենթարկվել սանիտարական մշակման։

Թ Ե Մ Ա. 10. ԿԵՆՍԱՄԹԵՐՔԻ, ԶՐԻ ՑԵՎ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԹՆ ՆԵՐԴՐՈՇՈՒԹՅՈՒՆԻՑ

Յեթե սննդեղենը վարակվելու լինի անկայուն թունավոր նյութերով որինակ՝ փոսդենով, գիֆոսոգենով և կթն գոլորշիներով, ապա կարելի յե սննդեղենը անմնաս գարճնել, թողնելով քամու տակ, մինչեւ վոր հոտն անցնի, կամ 3—4 ժամ լեռացնելով ջրի մեջ։

Կթն մասախողով վարակված ուսուլեղենը, պահմանջում ե յերեկարատև ողափոխություն՝ նույնպես, մինչեւ վոր թն հոտն անցնի, և ապա կարելի յե յեփել տապակել, թիսել կամ անմնաս գարճնել հատուկ լեղանակներով։ Կթն կաթիներով վարակված սննդամթերքի

մեծ մասը չի կարելի անվասա դարձնել առանց գործադրելու գաղա-
հանման բարդ լեզնակներ։ Այդ պատճառով գործնականորեն այն
սննդամթերքը, վոր վարակլած և կթՆ կաթիլներով, գործածության
համար անպետք և վտանգավոր ե. Այն պետք է վոչնչացնել։ Հեղուկ թՆ
կաթիլներով վարակլած ջուրն անպետք և խմելու, կերակրի, լվաց-
վելու և լվացքի համար։

Ի՞նչպես պետք ե սննդամթերքն ու ջուրը պահպանել վարակու-
մից—Ռդտագործել հերմետիկորեն փակվող մետաղե և ապակի աման-
ներ (ըիտոններ, բանկաներ, շներ, տերմոսներ և ալլն). խցանները
փաթաթել պերգամենտի, ձեւած, յուղած և ձյութած թղթով. մթերք-
ները պահել ուսուինի կամ մի քանի շերտ պերգամենտի, ձեթած թղթ-
թով պատած ամաններում կամ փայտե առարկի (տարակի) մեջ (ար-
կղներում), վոր ձեղք չունի և ունի ամուր փակող կափարիչներ։

Չբացված կոնսերվին լիովին ապահովված են կթՆ վարակու-
մից, սակայն կոնսերվի այն բանկաները, վորոնց վրա թՆ կաթիլներ
են ընկեր, պետք ե դրսի կողմից գաղահանել, տրորելով լաթով (սկըզ-
բում լաթը պետք ե թաթախել կերուինի կամ բենդինի մեջ, ապա
չոր լաթով), իսկ հետո պետք ե բանկաները մաքուլ ջրում լեռացնել
մեկ ժամվա ընթացքում։ Այլ տեսակի ամանների մեջ պահված և
վարակման յենթարկված մթերքները պետք ե զգուշությամբ հանել
և հեռացնել նրանց վերին շերտը։ Փայտե և կարտոնե ամանները լի-
ուացնել այնպես ինչպես կոնսերվի բանկաները։ Վարակված շների և
ջրամանների ջրից ոգտվելու դեպքում պետք ե դրանց գրսի լիրեսն
անվաս դարձնել, լավ լվանալ և սրբել ապակե խցանները. փայտե և
կարտոնե խցանները պետք ե վոչնչացնել։ Գաղահանման ժամանակ
գործադրված լաթերը ալրել իսկ վարակված առանեղենը յեռացնելու
համար գործածած ջուրը զգուշությամբ լցնել կոյուղում հոսանքների
մեջ։ Տնային իրերը պետք ե պահել արկղների, սննդուկների, պահա-
րանների մեջ, վորոնք կողպեքներ ունեն և կարող են ողի համար
անթափանց ձեռվ. փակվել։

Առաջին հերթին ողային տագնապ աղդանշանով պետք ե ծած-
կել այն ամանները, վորոնք ծառայում են կերակուր պատրաստելու
և գործածելու համար, հագուստեղենը, կոշիկեղենը և սպիտակեղենը։
Խոշոր իրերը (որինակ՝ փափուկ կահկարասիքը, բարձերը), վորոնք
գժվարությամբ են գաղահանգում, անհրաժեշտ և ծածկել հաստ թղթ-
թով, ճիլովով և ձեռքի տակ յեղած այլ կտորներով։

Թ Ե Մ Ա. 11. ԿԹՆ ԳԱԶԱՍՆԱՐԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գաղահանում կոչվում են՝ թՆ վարակված կառուցումները, վալը,

ողը, շնչքերը, զանազան իրերը, հագուստեղենը, մաշկը և այլն ան-
վաս դարձնելու վերաբերյալ ձեռք առած բոլոր միջոցառումները։
Գաղահանման աշխատանքների ժամանակ գործադրվում են հե-
տեվյալ հիմնական նյութերը։

Քորակիր (շր կամ շաղախի ձեռվ, այսինքն՝ քլորակրի փոշին
ջրով խառնած)։ կալցիումի նիպուլորիդ, վորը արտաքուստ նույն քլո-
րակիրն ե, բայց քլորի ավելի մեծ պարունակությամբ. մանգանա-
թթվուտային կալիում, քլորամին, նատրիումի հիպոքլորիդ և այլն.
Այս բոլոր նյութերի լուծույթները գործ են ածվում կթՆ վարակված
մարդու մաշկի և արժեքավոր մետաղե առարկաների գաղահանման
համար։ Յեռացող ջուրը գործ ե ածվում բամբակեղենն, բրդեղենն և այլ
գործվածքների գաղահանման համար։ Դոլորշին գործ ե ածվում կո-
պիտ բրդից հագուստեղենն ու մետաղե իրերը կթՆ գաղահանելու
համար։ Տաք ողը լավ միջոց ե կայուն թունավոր նյութերով վարակ-
ված հագուստը գաղահանելու համար։ Զանազան այրվող նյութեր՝
նավթը, կերոսինը, բենզինը, ծառայում են փոքր տեղամասերը, կա-
ռուցվածքների առանձին մասերն և ալլն անվաս դարձնելու համար։
ԿթՆ, լուծիչներն անվաս չեն դարձնում, այլ միայն լուծում
են նրանց և այցպիսով թՆ հանում և հեռացնում են վարակված
առարկաներից։ Լուծիչները գործ են ածվում մաշկը և մե-
տաղե իրերը գաղահանելու համար։ Կպբիտի լավ լուծիչներ են հան-
դիսանում չորս քլորային ածխածինը, սկիզբիդարը, ացետոնը, յեթե-
րը, սպիրտը, բենզինը, կերոսինը, նավթը։

ԿթՆ վարակված վայրի գաղահանման համար գործադրվող գոր-
ծիքները։

Տրակտորային կցան—Ա.Դ.Տ դեգազատոր. ծառայում և խոշոր տե-
ղամասերի գաղահանման համար։

Զիռ կցան—ԿԴՊ դեգազատոր. ծառայում և նույն նպատակի
համար, ինչ և Ա.Դ.Տ.

Զենքի գաղահանման օալակի—Վ.Դ.Տ—1. ծառայում և վոչ մեծ
հարթ տեղամասեր գաղահանելու համար։

Զենքի գաղահանման գործիք—Ա.Դ.Պ—1. ծառայում և մետաղե
առարկաներ և առանձին փոքր տեղամասեր կամ կառուցվածքներ
լուծիչներով գաղահանելու համար։

Մաղ պատկարակի. գործ են ածվում քլորակրով փոքր հարթ տե-
ղամասեր գաղահանելու համար, ինչպես նաև Վ.Դ.Պ, Ա.Դ.Տ, և ԿԴՊ
գործիքներով գաղահանելու համար։

Կրակալին զարդիք. ծառայում և և փարակված փոքր տեղամասեր
գաղահանելու համար, վարակված շերտը կիզելու ձեռվ։

Առանց միջոցներ, վոր սպառագործվում են վայրի և կառուցվածք-



Ների գաղահանման համար: Չոր քլորակրով վայրը գաղահանելու համար կարելի է ողտագործել վորոշ գյուղատնտեսական մեքենաներ (կիր ցանող և պարարտանյուութ ցանող շարքացաններ): Բացի դրանից քլորակրը կարելի յե շաղ տալ սովորական բաների ոգնությամբ: Քլորակրի շաղախով կառուցվածքների գաղահանման համար կարելի յե ողտագործել դուլլեր, ներկարարական և ճլողեր վրձիններ և այլն: Հեղուկ լուծիչներով կարելի յե գաղահանել զանազան տեսակի այգեգործական և բանջարանոցային շաղացաններ, ջրացաններ, փողոց ջրերու ավտոցիստերներ, ներկացան գործիքներ, վերջապես՝ կարելի յե ողտագործել ավելներու ու դուլլերը: Այրվող հեղուկներ ցանելու համար կարելի յե ողտագործել նույն ավտոցիստերները, այդեղործական ջրցանները և այլն:

Գաղահանման կամերաները ծառայում են տաք ողով և գոլորշիով հագուստը, անալին իրերը և զանազան ապարատներ (հեռախոսներ, շարժիչներ և այլն) գաղահանելու համար: Իրեւ այդպիսի կամերաներ կարելի յե հարմարեցնել բաղնիքների շոգեկաթսային բաժանմունքները:

Գաղահանման կարաները ծառայում են բամբակեղեն գործվածքների, նույնպես և ունինի առարկաների գաղահանման համար (ջրում յեռացնելու միջոցով):

Վայրն անվաս դարձնելու համար պետք ե ցանել չոր քլորակիր. ցանելու միջին նորման 400 գրամ և մեկ քառակուսի մետրի համար, կամ թե բաներով պետք ե կտրել հանել վարակված շերտը (5—8 սանտիմետր): Թփուտներով կամ բարձր խոտով ծածկված վայրը գաղահանում են կրակային յեղանակով կամ քլորակիր են ցանում, նախալես հնձելով, կտրատելով կամ կրակով վոչնչացնելով բուսականությունը: Զլունի ծածկվածքը գաղահանում են՝ փայտի թիրով հանելով ճյուղի վարակված շերտը, կթել լցված ավիասումբերի պայթման տեղում առաջացած ծագարները (փոսերը) գաղահանում են նրանց լցնելով քլորակիր խառնած հողով (3—4 կիլոգրամ մենա մի ծագարին):

Մետաղի իրերի վրայից պետք ե քսուքը (յուղը) հեռացնել գաղահանումից առաջ, արորելով այնքան, մինչեւ վոր չորանան: Կոպիտ մետաղի իրերը (ուկսերը, ճախարակի ակները և այլն) գաղահանում են կրակային յեղանակով կամ քլորակիրի շաղախով և վերջում լվանում են ջրով: Դաղդյաները, զանազան մեքենաներ գաղահանում են հեղուկ լուծիչներով: Մանր մետաղի իրերը և գործիքները կամ յեռացնում են ջրում (1 ժամ) կամ լվանում են մանգանաթթվուտային կալիումի, քորամինի լուծութներում և սովորական լուծիչներում: Գաղահանումից հետո լավ արորում չորացնում են:

Կոպիտ քրղեղեն գործվածքները գաղահանում են տաք ողի (120 աստիճան) հոսանքով 4 ժամվա ընթացքում: Մորթեղենն ու կաշիները՝ տաք ողի (60 աստիճանից վոչ բարձր) հոսանքով 8 ժամվա ընթացքում: Բամբակեղենը ջրի մեջ յեռացնում են մեկ ժամվա ընթացքում կամ գաղահանում են գոլորշիով (2—4 ժամ): Ծետինե կոշիկները, ձեռնոցները, հակագաղի դիմակները և միացնող խողովակները, հագուստեղենը, սփացները, վարագույրները և այլն, ջրում լեռացնում են 2,5 ժամվա ընթացքում: Վարակված ներքնակները, բարձերն ու բալիջները վոչնչացնում են կամ հանձնում են հատուկ գաղահանման կամերաների՝ գաղահանման համար: Գորգերն ու գորգանման սփացները քամուն են տալիս և տաքացնում են արեի տակ, մինչեւ վոր հոտն անհետանա, կամ տաքացնում են տաք ողով (60 աստիճանից վոչ ավելի): Սեղանները, աթոռները, փայտե մահճակալները գաղահանում են քոլորակիրի շաղախով: Մետաղե և ապակե ամանեղենը գաղահանում են լուծիչներով, իսկ այնուհետեւ լվանում են տաք ջրով և տրորում, չորացնում են:

Յերրորդ նորմա

ԲԺՇԿ—ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 12. ԹՈՒՆՍՎՈՐ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ.
ԻՆՔՆՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ՓՈԽՍԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԹՆ ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ԴԵՂՔՈՒՄ

ԹՆ ՄԱՅԻՍ—ՊԱԼԱՐԱՅԻՆ ԽԵՐԳՈՐԾՈՐՅՈՒՆՐ

ԹՆ մաշկա-պալարային ներգործության ընորոշ ներկայացուցիչներն են իպրիտն ու լյուիզիտը: Խարիտի կաթիլներով հարվածելու գեպքում նրա ներգործությունը յերեսում և միայն հարվածելու րոպեցից 3—6 ժամ հետո: Սկզբում մաշկը կարմրում ե, ապա սկսում ե բշտել: 12—18 ժամից հետո սկսում ե առաջանալ ջրջրոտ բշտիկներ: Բշտիկները պայթում են 4—6-րդ որը, փորից հետո թեփուտում են կամ առաջանում են գանդաղ առաջացող վերքեր: Խպրիտն արագորեն թափանցում ե մաշկի մեջ և լավ լուծվում ե մաշկի տակ գտնվող ճարպային շերտի մեջ, առանց կորցնելու իր հարվածող հատկությունները:

Հեղուկ իպրիտն աչքի մեջ ընկնելով առաջացնում ե ծանր վերքում, և նույնիսկ կարող ե զրկել տեսողությունից: Յեթե իպրիտով վարակված սնունդը մարդ կուլ ե տալիս կամ խմում ե ջուրը, ապա այդ առաջացնում ե բերանի խոռոչի, վորկորի, ստամոքսի և աղիքների մասավածքներ, նմանապես և որգանիզմի ընդհանուր թու-

Նավորում: Վարակման նշաններն են՝ սուր ձգող ցավեր ստամոքսում, փոխում, յերբեմն լուծ:

Իպրիտի գոլորշիներն ու մառախուղն առանձնապես ազդում են շնչառության և տեսողության որդանների վրա: Խիստ վարակված տեղում ամուսն ամիսներին (ըստ Յեմիուսի մոտ 20 աստիճան ջերմության ժամանակ) իպրիտի գոլորշիներով մաշկի լուրջ վնասվածք կարող է առաջանալ, յերբ մարդ 20—30 րոպե մնա վարակված տեղամասում, իսկ շնչառության և տեսողության որդանները տուժում են 5—10 րոպեյից հետո: Չմուսն պայմաններում իպրիտի գոլորշիները գործնականորեն վտանգավոր չեն, վորովհետև ցածր ջերմության ժամանակ իպրիտը թուլ և գոլորշանում:

Իպրիտի գոլորշիներով շնչառության որդանների հարվածման նշանները հայտնաբերվում են մի քանի ժամից հետո կրծքի ցավի, խոպության, հազի, հարբուխի, գլխացավի ձևով: Հետագայում կարող են լինել ծանր բարդություններ (որինակ թոքերի թարախակալած բորբոքում): Յերկրորդ—յերրորդ որը նկատվում է շրթունքների, լոդերքի այրվածքներ: Քթի լորձաթաղանթը ծածկվում է թարախուուր լորձունքով: Միաժամանակ զարգանում են որդանիզմի լոդերանուալի կուտարման յերեւոյթներ: Շնչառության որդանների համար առանձնապես վտանգավոր և իպրիտի մառախուղը լուսավում կախովի մեջ 2—3 անգամ ներշնչելը կարող է առաջ բերել մահացում:

Լուսիֆիլը հիմնականում առաջացնում է միենուկն վնասվածքները, ինչ և իպրիտը, բայց ունի նաև վորոշ տարբերություն: Նախ՝ նաընդունակ և առաջացնելու վոչ միայն մաշկա—պալարական, այլ և գրդոիչ ներգործություն՝ առատ արցունք, սուր այրվածքներ քթի և կոկորդի մեջ, փոշտոց, լորձունքի հոս քթից, սրտախառնություն և փսխոց: Յերկրորդ, հեղուկ լուսիֆիլի ներգործությունը մաշկի վրա արտահայտվում է անհամեմատ ավելի արագ, քան իպրիտի ներգործությունը, հարվածքած տեղերում արդեն առաջին 30 րոպեյի ընթացքում յերեսում է կարմրություն, զգացվում է այրվածք և ցավ: Ամշշկի ուռչելն ու բշտիկներ առաջանալն սկսվում են 4—8 ժամից հետո: Յերրորդ, լուսիֆիլուն ավելի ուժեղ ներգործություն և ունենում ծանր հարվածումների գեպքում (փսխում, գիտակցության կորցնելը, մաշկի զգայության կորցնելը, ձեռքերի և վոտների ժամանակավոր պարալիչ):

Հեղուկ իպրիտի կաթիլներով վնասվելու գեպքում ամենից առաջ պետք և իպրիտի կաթիլները մաքրել մաշկի վրալից, սպովելով անհատական սանիտարական կապոցից կամ բամբակի, մառլայի, ծծան թղթի մաքրուր լաթի ոգնությամբ: Իպրիտի կաթիլները մաքրելիս պետք է ուշադրությամբ բամբակը կամ մառլան մոռեցնել մաշկին և ծծեցնել կաթիլը, այնուհետև, մաշկի տուժած մասերը մի քանի

անվամ պետք եւ սրբել լուծիչներով (բենզինով, սպիրտով, կերոսինով և այլն): Առաջին համարավորության գեպքում իպրիտից տուժողը պետք եւ տաք դուշ ընդունի կանաչ ոճառով:

Աչքերը պետք եւ վաճառայի մեկշերկու տոկոսալին և բորբթվի յերեք տոկոսային գոլ լուծուվթով: Լվացումը կատարվում է անընդհատ շիթով: Նույնպիսի լուծուվթով պետք եւ ողողել բերանը, կոկորդը և քթի ծակերը: Իպրիտի գոլորշիներից և մառախուղից տուժելու գեպքում ամենից առաջ պետք եւ լվանալ աչքերը և ողողել բերանը, կոկորդը, քթածակերը և ապա լողանալ զուշի տակ:

Ցեթե մաշկը տուժել է լցուիզիտից, ապա պետք եւ բամբակի, մառլայի և այլն կտորներով ուշադրությամբ ծծեցնել լցուիզիտից կաթիլները: այնուհետև պետք եւ մաշկը լվանալ կը ու նատրի հինգ տուկոսային ջրալին լուծուվթով և լողանալ զուշի տակ: Աչքերը, բերանը և քթածակերը պետք եւ լվանալ նույն ձևով: Բնչալիս և իպրիտից տուժելու գեպքում:

Խեղդող ԹՌՆ Ենթգրծումը

Խեղդող ԹՌՆ հարվածում են շնչառության որդանները, առաջացնելով հիվանդագին հազ և թուլություն: Ծանր թունավորումների ժամանակ սկսվում է տանջալից հազ՝ խոխոցով և խզխոցով, արտաթորքում է փրփրոտ խորխ (յերեխն արյունով), սկսվում է ուժեղ թուլություն, խոպտություն և ձաշնի խորմ: Զեռքերը ու վոտքերը կապտում և սառչում են: Կարող է զարգանալ թոքերի ուսուցքը, վորհացնում և մահվան: Այս բոլոր յերեւութները լինում են քլորով և ֆոսֆենով վնասվելու գեպքում: Տարբերությունն այդ յերկուսի միջև ամենից առաջ այն է, վոր փոքր քանակությամբ գործածված փոսգենի ներգործությունը մի անգամից չի արտահայտվում: Ֆոսգենի վոչ մեծ քանակության յերկարագություն ժամանակակի թունավորումն ընթանում է հետեւյալ կերպ: սկզբում, հենց առաջին ներշնչումների ժամանակ սկսվում է թեթի հազ, թույլ գլխապտույտ, բնորոշ համ բերանում, իսկ այնուհետև այդ բոլոր յերեւութներն անհետանում են 4—6 ժամվա ընթացքում տուժողն իրեն համեմատաբար լավ և զգում: Այնուհետև արագ և ուժեղ սկսվում է զարգանալ ծանր թունավորումը, սկսվում է շնչարգելություն, հազ, փրփրոտ և խորխով, փսխում, թոքերի ուռչում և այլն: Ֆոսգենով թունավորվելը հաճախակի վերջանում է մահով, մանավանդ, յեթե համեմատաբար թվացող լավ վիճակում տուժողը շարժումներ եւ արել կամ փորեն փրփկական աշխատանք և կատարել: Մեծ քանակությամբ գործածված փոսգենի ներգործման գեպքում ծանր ձեր թունավորումը կարող է

գարդանաւ շատ արագ՝ թունավորված ողը մի քանի անդամներշնչելուց հետո:

Քլրով հարվածելու դեպքում թունավորումը զարգանում է հենց առաջին ներշնչումներից սկսած, և աստիճանաբար ուժեղանում են վերևում նկարագրված վարակման նշանները:

* Քլրով կամ ֆոսդենով թունավորվածին ոգնություն ցույց տալու համար ամենից առաջ անհրաժեշտ ե անմիջապես դադարեցնել թվականիցից վրա այսինքն՝ դուրս տանել վարակված շրջանից, կամ սարքին հակագաղ հազցնել: Բոլոր դեպքերում ցանկալի էն, զոր վարակվածն ինքը տեղից տեղ չգնա, այլ վոր նրան փոխադրին ուրիշները:

Առաջին հնարավորության գեղքում պետք ե բերանն ողողել սողայի յերկտոկոսային լուծուվթով և աչքերը լվանալ սողայի մեկտոկոսային կամ բորաթթվի 1—2 տոկոսային լուծույթով: Յեթե այդ լուծույթներից ձեռքի տակ չկա, ապա լվանալ ջրով: Վարակվածին պետք ե լիակատար հանդիսատ տալ, պառկեցնել, տաք ծածկել, տաք ըմպելիք տալ (թեյ, կաթ, սուրճ), թույլ չտալ ծխելու: Հաղելու դեպքում տալ ներշնչելու սողայի յերկտոկոսային լուծույթ կամ յեթեղ (բամբակից): Յեթե ձեռքի տակ թթվածնի բարձ կա, ապա ներշնչել տաք թթվածին: Վոչ մի դեպքում արհեստական շնչառություն չանել:

Ընդհանուր բունավորում պատճառող թվ

Այս թվ շնչառության որգանների միջոցով հարվածում են ներփային սիստեմը կամ արյունը: Թունավորման նշաններն են գլխապտույտ, սրտի խփոց, ընդհանուր թուլություն, սրտախառնություն, փսխում, գլխացավ, գիտակցության վորոշ թուլություն, իսկ ծանր թունավորման դեպքում՝ ուշաթափություն, շնչառության խիստ թուլություն կամ կանգնում, ջղաձգություններ, պարալիչ (անդամաբություն) վորին կարող ե հետեւել արագ մահացություն:

Ընդհանուր բունավորում պատճառող թվին են պատկանում ածխարքու (տգարի գազը) յեվ կապտարթուն: Փոքր քանակությամբ գործածված ածխաթթվով թունավորվելու դեպքում տուժողը զգում ե գլխում ծանրություն ու գլխացավ, ականջների խշչոց, տեսողության մթագնում, սրտախառնություն, գիտակցությունը կեսով չափ կորցնում ե: Մեծ քանակությամբ գործածված ածխաթթվով կորցնում են գիտակցությունը, մարմնի վրա դուրս ե տալիս կարմիր ցան կամ վարդագույն բծեր, գեմքը կարմրում ե: Կապտարթի թունավորվելու դեպքում թունավորման ընդհանուր պատկերը չափազանց արագ ե զարդանում: Կոկորդում քերծվածք, բերանում դառը համ զգալուց, սրտախառնությունից, գլխացավից և շնչարգելությունից հետո թունավոր-

վածը կորցնում ե գիտակցությունը և սկսվում են սոսկալի ջղաձգումներ: Այնուհետև կանգ ե առնում շնչառությունը և դադարում ե սրտի աշխատանքը: Այս բոլոր յերկույթները կարող են կատարվել մի քանի տասնյակ վայրկյանի ընթացքում:

Ոգնությունը պետք ե ցույց տրվի շատ արագ, այլապես թունավորումը կարող ե վերջանալ մահացությամբ: Հիվանդին պետք ե դուրս տանել թարմ ող, տալ գրգռիչ միջոցներ (փաթաթել սառը ջրում թրջաց սավանի մեջ, շփել թաց կտորով, դուրս հանել լեղուն, տալ հոտոտելու անուշադրի (նաշաղիբնի) սպիրա, տաք սուրճ): Յեթե այդ ամենը չեն ոգնում, պետք ե յերկարատև արհեստական շնչառություն անել և ապա թունավորվածին տալ լիակատար հանդիսատ, տաք ծածկել, տալ տաք ըմպելիք:

Գրգորի ներգործություն ունեցող թվ

Գրգորի ներգործություն ունեցող թվ հարվածում են աչքերը կամ քթի և կոկորդի լորձաթաղանթը: Աչքերում սկսվում ե զգացվել այրվածք և ծակոց, առատ արտավաբերություն, աչքերը չեն դիմանում լույսին, կոպերը կարմրում և ուռչում են, կոպերը ջղաձգաբար փակվում են: Քթի և կոկորդի գրգռվելու դեպքում ամենից առաջ քթում և կոկորդում սկսվում ե սուր այրվածք, քերծվածք և խտխտոց: Հաճախ լինում ե անընդհատ փոշտոց, քթից լորձունք և հոսում, քթում և կոկորդում զգացվում ե ցավ, նրանք ուռչում են, առատ թուք և արագագիւռ, կրծքի վանդակում ճնշում ե զգացվում, լինում ե գլխացավ, հազ, յերբեմն ել ցավում են ատամները, ճնոտները. փռսինել են սկսում:

Քրոացետնինենը առաջացնում ե աչքերի սուր գրգռում, իսկ մեծ քանակությամբ գործածլած լինելու դեպքում առաջացնում ե հազ, հոս քթից և արտավաբերություն:

Ադամօհիսը առաջացնում ե քթի և կոկորդի խիստ գրգռում: Նույնիսկ աղամսիտի ծխի ամպում կարճատև ժամանակ մեալ (2—3 րոպե) մարդուն 2—3 ժամով զրկում ե աշխատունակությունները: Ադամօհիսի յերկարատև ներգործությունն առաջացնում ե ծանր թունավորում:

Քրոացետոփենոնով հարվածելու դեպքում պետք ե սողայի յերկառիկոսային լուծույթով կամ գոնե ջրով լվանալ աչքերը և ողողել բերանը: Վոչ մի դեպքում չի կարելի աչքերը ծեռքով տրորել կամ թաշկինակով սրբել: Դա ուժեղացնում ե գրգռումը:

Աղամօհիտով հարվածվելու դեպքում պետք ե՝ 1) սողայի յերկառիկոսային կամ բորաթթվի 2—3 տոկոսային լուծույթով լվանալ քիթը,

կոկորդը և աչքերը. 2) ներշնչել անուշաղը (նաշաղիրնի) սպիրտ, յեթեր, գինու սպիրտ, բնդունել տաք թեյ կամ սուրճ:

ԹԵՍԱ. 13. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱԿԱԽՊՐԻՏԱՅՑԻՆ ՅԵՎ ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ ԿԱՊՈՅԻՑ ՈԴՏՎԵԼԸ, ԱՐՃԵՍՅԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԱՐՑՈՒՆՀՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԳՆԵՑՆԵԼԸ ՅԵՎ ՎԵՐՔԻ ԿԱՊԵԼԸ, ՏՈՒԺԱՌՆԵՐԻՆ ՓՈԽԱՌՄԵԼԸ

Անհատական հակախպրիտային կապոցը ծառայում է մաշկի նախնական մաքրման համար, մաշկի վրա մաշկա—պալարային թև ընկնելու դեպքում: Կապոցը բաղկացած է փոքրիկ թիթեղյա տուփից, վորի մեջ դասավորված են բամբակի և մառլայի տամպոններ՝ խխմած լուծիչների մեջ: Տամպոնները միացած են մեկ ընդհանուր թելով: Այդ թելը հետությամբ կտրելու համար տուփի վերևի մասում կամ հատուկ թիթեղյա կտրիչ: Տուփի կափարիչի վրա ներսի կողմից հայելի կամ, վորից պետք է ոգտվել դեմքը կթն կաթիլները մաքրելիս:

Կապոցից պետք է ոգտվել հետեւյալ ձեռվ. բանալ կափարիչը և դուրս քաշել վերին տամպոնը. կտրել տամպոնները միացնող թելը թիթեղյա կտրիչի ոգնությամբ. փոքր ինչ մզել տամպոնը. զգուշությամբ տամպոնով հանել կթն կաթիլը: Այդ տամպոնը գցել մի կողմ և հանել հետեւյալը և այն մզել մաշկի վարակված տեղի վրա: Այս ձևով մաշկի վարակված տեղը պետք է մաքրել 5—10 րոպեի ընթացքում, մզած տամպոնները փոխելով նոր տամպոններով: կթն վարակված աչքը տամպոնով լվանալ չի կարելի:

Արյուննոսությունը կարելի յե կանգնեցնել հետևյալ ձեռվ. մարմինի վիրավոր մասը պետք է վեր բարձրացնել, մեջքի տակ դնելով մի վորեն առարկա: Սղմել այն զարկերակները, վորոնցով արյունը հոսում է դեպի վերքը. այդպիս կարելի յե անել այն տեղերում, վորտեղ զարկերակը վոսկը մոտիկ է գտնվում. պետք է մատներով շոշափել այն տեղը, վորտեղից խփում ե արյունը և զարկերակը ուժեղ սղմել վոսկը: Վերքից վերև գունվող մասը կապել ձգված բավթայով, փոկով, թոկով, թելով, թաշկինակից կտրած ոլորով և այլն: Կապը փաթաթելուց առաջ մաշկը փաթաթել փափուկ կտորով, (թաշկինակ, բինտ), վորպեսդի մաշկը չը ճղմվի:

Վիրակապը հնարավորություն է տալիս կաղելու իր կամ ընկերոջ վերքը, մինչև բժշկից ոգնություն ստանալը: Այդ կապոցը բաղկացած է բամբակի և մառլայի յերկու կողմը կաթիլներից (իրար վրա պինդ դարսված մառլայի յերկու քառակուսի կտոր, վորոնց արանքում բամբակ և դրված), մառլայի բինտից և անգլիական քորոցից: Կապոցի մեջ պարունակվածը փաթաթված է ամուր թղթի մեջ և գտնվում է

ուետինացված կտորից կտրած ծածկոցի (չեխոլի) մեջ, իսկ վերջինս դրված է բարակ կտորից կարած ծածկոցի մեջ:

Կապոցից պետք է ողտղել հետեւյալ ձեռվ. կաղոցը պետք է վերցնել ձախ ձեռքը, իսկ աջով քաշել ծածկոցի կարի թելի ծայրը: Հանել և դեն գցել ծածկոցը, պատռել ուետինացված կտորից կարած ծածկոցը և գեն գցել: Հանել անգլիական քորոցը, բացել թուլթը և վերցնել վիրակապական իրերը: Բինտը վերցնել աջ ձեռքը, իսկ ձախով բոնել բինտի աղատ ծայրից, վորին կարված է մառլայի կոմպրեսը: Պետք է հետեւյալ վար կտրելու մասում կամ հագուստը չդիպչեն կապի այն յերեսին, վորը գրվում է վերքի վրա (կապի այն կողմին, վորին կարելի յե գիտչել, կարված է կարմիր թելով):

Բինտը փաթաթելիս պետք է կատարել հետեւյալ կանոնները: Բինտը պահել աջ ձեռքում, կոմպրեսը վերքի վրա պահել ձախ ձեռքով, իսկ աջով բինտը տանել վիրավորի մարմնի վրանով այնպես, վոր բինտը ընթելի դեպի իր ձախ ձեռքի կողմը: Բինտը պետք է պինդ կազմի մարմնին, բայց վիրավորին պետք է ցավ չպատճառի և չխանգարի արյան շրջանառությանը (յեթե բինտը խանգարում է արյան շարժմանը, այդ գեղագում մաշկը բինտից ներքեւ սառչում և կապում է): Բինտը լավ փաթաթելու համար պետք է բինտը լետ ծալել: Զի կարելի կապը դնել հագուստի կամ սպիտակեղենի վրանոց: Ձեռքերով կամ այլ առարկաները չը դիպցնել վերքին, վերքը լրով կամ այլ հեղուկներով չը լվանալ: Փորձ չանել վերքից հանելու նրա մեջ վառված գնդակները կամ գնդակի բեկորները:

Վիրավորին տեղափոխելու համար նրան պետք է նստեցնել նստարանի ձևով պահած ձեռների վրա, կարճ տախտակի, փայտի վրա և այլն: Եեթե վիրավորը կորցրել է իր գիտակցությունը, ապա նրան յերկու հոգով առանց պատգարակի (նասիլվայի) տեղափոխելու ժամանակ տեղափոխողներից մեկը կանգնում է վիրավորի գլխի մոտ և նրան բռնում է արմունկների տակից: Մյուսը կանգնում է մեջքն արած վիրավորին և բռնում է նրա վուներից՝ ծնկներից փոքր ինչ ցածր:

Արհեստական շնչառություն կատարելու կարիք կլինի ամենից առաջ ընդհանուր թունավորում առաջացնող թև պատճառած ծանր թունավորումների և գիտակցությունը կորցնելու ժամանակ, յերբ այս կամ այն պատճառով շնչառությունը ժամանակավորապես զարգարել կամ խիստ թուլացել է:

Արհեստական շնչառության յեղանակներից մեկը Շեֆֆերի յեղանակն է: Այդ յեղանակով տուժածներին փորի վրա պառկեցնում են գետնին, ձեռքերը ձգում են առաջ և գլուխը շուր են տալիս կողքի վրա (տուժածի վրայից նախապես հանում են խանգարող հագուստը):

Այնուհետև արհեստական շնչառություն կատարողը չոքած կանգնում է այնպես, վոր տուժածի կոնքը գտնվի նրա ծնկների միջև։ Դրանից հետո ոդնություն ցուց տվողը մեկնում է իր ձեռքերը և դնում է տուժածի մեջքի վրա այնպես, վոր ձեռքերի թաթերը գտնվեն տուժածի գողնաշարի լմբիու կողմում, նրա ներքնի կողերին մոտիկ։ Կռանալով առաջ, նա իր մամնի ծանրությունը ցցում է ձեռքի թաթերի վրա, և ճնշելով տուժածի կրծքի վանդակը, ստիպում է վոր նա արտաշնչի, դրանից հետո արհեստական շնչառություն կատարողը դադարեցնում է ճնշումը և մի փոքր վեր ե բարձրանում։ այդ ժամանակ տուժածի կրծքի վանդակը ուղղվում է և ոդ և ներծծում։ Այնուհետև, հերթով ճնշելով և ազատ թողնելով (մեկ րոպեյում 16—20 անգամ) տուժածի կրծքի վանդակը, արհեստական շնչառությունը, շարունակում են այնքան ժամանակ, մինչև վոր տուժողն ինքը սկսի շնչել։ Յեթե յերկու ժամկա ընթացքում տուժածն ինքը չի սկսում շնչել, ապա արհեստական շնչառությունը, սրվորաբար, անոդում է այլնու։

Մյուսը՝ Սիլվեստրի յեղանակն ե։ Այս լեղանակը հետեյալն ե. հագուստից գունդ են կապում և դնում են տուժածի մեջքի տակ։ Ոգնություն ցուց տվողը չոքած կանգնում է տուժածի գլխի մոտ, բռնում է տուժածի արմունկներից ներքն և առանց շտապելու («մեկ—յերկու» հաշվով) նրա ձեռքերը բարձրացնում է տուժածի գլխավերելը և քաշում է գեպի իրեն։ Սպասում է 2 վայրկյան, ապա «յերեք—չորս» հաշվով տուժածի արմունկները յետ են տանում և 2 վայրկյանով արմունկները կպցնում ե կողքերին։ Տուժածի արմունկների յերկարացնելու ծալը մեկ րոպեյում կատարում են 16—30 անգամ, այնքան ժամանակ, մինչև վոր տուժած մարդն ինքն սկսի շնչել ինքնուրույն կերպով։ Արհեստական շնչառություն կատարելիս պետք է հետեւ, վոր տուժածի լեղուն յետ չնկնի։

Զորորդ նորմա

ՀԱԿԱՐԴԵԿԱՅԻՆ ՊԱԾՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թ Ե Մ Ա. 14. ԻՆՉՊԵՍ ՆՎԱԶԵՑՆԵԼ ՀՐԴԵՀԻ ՎՏԱՆԴՎ ՏԱՆ ՄԵԶ

Կրակի արագ տարածվելու վտանգը նվազեցնելու և պայքարը հերգենի դեմ հեշտացնելու համար վաղորոք պետք է ձեռք առնել մի շարք նախազդուշական միջոցառումներ, այն և պետք է տանիքներից, նախասենյակներից հեռացնել հեշտ բռնկվող առարկաները. վորոշել սենյակներից մարդկանց գուրս բերելու կարգը՝ առաջուց նշված հարմար ճանապարհներով. պատրաստել հրամարիչներ, ավագ պար-

կերում և արկղներում, ջուր, լինգեր, բահեր, դուզեր, ջրատար ծորակներ և այդ ամենը զետեղել վորոշակի տեղերում. արգելել, վոր ընակարաններում հեղուկ վառելիքի մեծ պաշարներ պահեն և ստուգել դրա կատարումը. Բոլոր սանդուղիքների վրա տան ակտիվիտաներից կազմակերպել հրցել պոստեր. տան բոլոր բնակիչներին սովորեցնել թե ինչպես պետք ե վարվել հրամարիչների հետ և թե ինչպես պետք և հրձիդ ուժմբերից ծագած հրդեհը ավազով հանգցնել:

Թ Ե Մ Ա. 15. Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ՀՐՁԻԳ ՈՌԻՄԲԵՐԻՑ ԾԱԳԱԾ ՀՐԴԵՀԻ ԴԵՄ

Հրձիդ սումբի այրվող նյութը չի կարելի ջրով հանգցնել (ջուրը միայն սաստկացնում է հրդեհը), այլ պետք է ավագ ցանել։ Շատ լավ կլինի, յեթե առաջուց պատրաստված լինեն 5—10 կիլոդրամանոց ավազով լի պարկեր, վորոնց ավազը պետք է շաղ տալ կրակի ոջախի վրա։ Հրձիդ սումբից կրակը ըրջակա առարկաների և շենքերի վրա տարածելու դեպքում նրանց կարելի յե հանգցնել սովորական լեղանակով, ջրի և հրամարիչների ոգնությամբ։

Թ Ե Մ Ա. 16. Ի՞ՆՉՊԵՍ ՈԳՏՎԵԼ ԶԵԽԹԻ ՀՐԱՄԱՐԻՉՆԵՐԻՑ

Զեխթի հրամարիչները լավ միջոց են հրդեհի վոչ մեծ ոջախներն արագորեն հանգցնելու համար։ Հրամարիչները պետք է ողտագործել հետեւյալ ձեռով. անօթը շուռ տալ հատակը գեպի վեր, մետաղյա ձողի ծալը կոճակը խփել հատակին և հատուկ անցքից գուրս հոսող փրփուրն ուղղել կրակի ոջախի վրա։

ՀԵՖԳԵՐՈՐԳ ԸՆՐՄԱ

ՀՈՓՊ-Ը ՑՆԵՐՈՒՄ

Թ Ե Մ Ա. 17. ՏԱՆ ՀՈՓՊ—Ի ԼԻԱԶՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տան ՀՈՓՊ—ի լիազորն այն անձնավորությունն է, վորը լրդային իշխանության և հասարակայնության առաջ պատասխանատու յե տան հակոդային և քիմիական պաշտպանության համար։ ՀՈՓՊ—ի լիազորներ են համարվում տների կառավարիչները. Լիազորը տան բնակիչներից կազմակերպում է ՀՈՓՊ—ի ինքնապաշտ-

պահության խմբակ և ինքը հանդիսանում ե այդ խմբակի պետք: Նա հոգ և տանում, վոր տան բոլոր բնակիչները ծանոթ լինեն այն կանոնների հետ, վոր անհրաժեշտ ե գործադրել հակառակորդի ողային հարձակման պայմաններում:

Լիազորը կազմակերպում ե «Պատրաստ ՀՈԲՊ»—ի նորմաների ուսամմասիրությունն ու հանձնումը տան բնակիչների կողմից: Նա պետք ե իմանա, թե ինչ չափով բնակիչներն ապահովված են հակառակերպվ: Յեթե հակառակերի թիվը պակաս ե, լիազորը կազմակերպում ե հակառակերի գնումը բնակիչների կողմից: Նրա պարտականությունն ե բոլոր բնակիչներին սովորեցնել հակառակից ոգտվելու ձեր, կազմակերպել հակառակային սիստեմատիկ մարզանքներ և անցկացնել վարժություններ՝ ծխարկման խցերում:

Լիազորը պետք ե հսկի: թե տան բնակիչները վորքան ձիշտ են կատարում հակառակեհային պաշտպանության կանոնները: Նա հոգ և տանում, վոր տունն ապահովված լինի հակառակեհային անհրաժեշտ կահավորումով, սիստեմատիկորեն ստուգում ե այդ կահավորման վիճակը և միջոցներ ե ձեռք առնում, վոր տան բոլոր բնակիչները կարողանան ձեռքի տակ յեղած միջոցներով հրդեհը հանցնել և գիտենալ թե նրանցից յուրաքանչյուրն ինչ պետք ե անի հրդեհը ծագելու դեպքում:

Լիազորը կարմիր խաչի կազմակերպության հետ միասին հոգ և տանում, վոր տան բնակիչներից կազմվեն սանիտարական ողակներ և տունն ունենա առաջին ոգնության փոքրիկ գեղատուն, վոր բոլոր բնակիչները սովորեն ինքնոգնության և փոխադարձ ոգնության պարզ յեղանակները և հանձնեն «Պատրաստ սանիտարական պաշտպանության» նորմաները: Լիազորը միջոցներ ե ձեռք առնում ապաստարան ստեղծելու ողային ուումբերից պաշտպանվելու, բնակարանները սարքավորելու հակաքիմիական տեսակետից և նախալատրաստում ե լուսա-քողարկման միջոցառումների համար: Այդային հարձակումների ժամանակ կարդը պահպանելու համար լիազորը կազմակերպում ե հեղափոխական կարգը պահպանող ողակներ:

Այդային հարձակման պահմաններում լիազորը, հիմնվելով իր ստեղծած ՀՈԲՊ—ի ակտիվի՝ ինքնապաշտպանության խմբակի վրա, ապահովում ե այն կարգն ու կազմակերպվածությունը, վորոնք անհրաժեշտ են ողային հարձակման հետևանքների զեմ հաջողությամբ պայքարելու համար: Այդ նպատակով լիազորը վազորոք մշակում է ՀՈԲՊ—ի տան բնակիչների գործողությունների պլանը՝ թշնամու ոգային հարձակման դեպքում: Այդ պլանը լիազորը պետք ե հասցնի ամեն մի բնակչին:

Թ Ե Մ Ռ 18. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բնակչության հակողային և քիմիական պաշտպանությունն ամենից առաջ հենց իրեն բնակչության գործն ե: Ամեն մի բնակչարձկոպում և առանձին տան մեջ պետք ե կազմակերպված լինի ինքնապաշտպանության խմբակ, վորը բաղկացած ե քիմիական, հակառակեհային, սանիտարական և հեղափոխական կարգը պահպանող ողակներից: Խմբակը գլխավորում ե տվյալ բնակիվարձկոոպի կամ տան լիազորը: Խմբակն անցնում է ՀՈԲՊ—ի ուսուցման դասընթացը, վորպիսին պետք ե կառուցված լինի այն հաշվով, վոր խմբակի յուրաքանչյուր անդամը կարողանա կատարել վոչ միայն տվյալ ողակի մարտիկի պարտականությունները, այլ վոր ամբողջ խմբակը հարկավոր դեպքում կարողանա մասնակցել հրդեն հանցնելու, վիրավորներին և տուժածներին առաջին ոգնությունը հասցնելու գործում: Խմբակի մարտիկները պետք ե հրահանգիչների ղեր կատարեն, ողներով պետին (ՀՈԲՊ—ի լիազորին) սովորեցնելու տան բոլոր բնակիչներին, թե ինչպես պետք ե պաշտպանվել ողային հարձակումներից և ամբողջ տունը նախապատրաստել այդ պաշտպանության համար:

Խմբակն իր մարտական պատրաստությունը պետք ե սերտորեն շաղկապի կուլտուրական, բարեկեցիկ բնակարան ստեղծելու պայքարի հետ: Սանիտարական ողակները կազմակերպում են հերթապահություններ՝ դբախտ գեպքերում անհետաձելի ոգնություն ցույց տալու տան բնակիչներին, հսկում են բնակարանների, բակերի մաքրության վրա, պայքարում են սանիտարական պահմանների բարելավման համար: Հրդեհաշեջ ողակները հսկում են տան հակառակենային ինվենտարի պահպանության վրա, և թե տան բնակիչները կատարնեմ են արդյոք անվտանգության կանոնները պրիմուսներից, նավթավառերից, գազից ոգտվելու, հեղուկ վառելիք պահելու տեսակետից: հսկում են ելեկտրոնազորդման գծերի, վառարանների, ծխնելույղների, ջրամատակարարման սարքին դրության վրա, հրդեհի դեպքում տունը պահունի յելքերով պահպանվելու վրա և այլն:

Քիմիական ողակները տան բնակիչներին ոգնում են քիմիական մեթոդներով պայքար կազմակերպելու բնակարանների վնասատուների և պարագիտների դեմ: Ամեն մի ողակ սովորաբար բաղկացած ե 5 մարդուց, իսկ ինքնապաշտպանության խմբակը՝ 20 մարդուց:

Ինքնապաշտպանության խմբակը քաղաքացիական բնակչության ՀՈԲՊ—ի հիմքն ե: Նա պետք ե կազմակերպված լինի ամեն տան մեջ և պետք ե հանդիսանա ՀՈԲՊ—ի այն սկզբնական կազմակեր-

պությունը, վորը ՀՈԲՊ—ի բոլոր այլ ստորաբաժանումներից և խըմ-
բերից ավելի շուտ կարող ե ոգնության դալ տվյալ բնակվարձկոռպի
և տան բնակիչներին: Խմբակը տան բնակիչների ոգնությամբ կա-
րող ե կատարել մի շարք անհետաձգելի աշխատանքներ, վերցնելով
ողային հարձակման հետևանքները մինչև ՀՈԲՊ—ի քիմիական, սա-
նիտարական, հրշեջ և այլ խմբերի գալը, վորոնք ուղարկում են
հարվածման յենթարկված ողախները: Վորքան ավելի շատ և տվյալ
բնակավարում ինքնապաշտպանության խմբակների թիվը, այնքան
ավելի արագ, լրիվ և վստահորեն և ավելի նվազագույն կորուստնե-
րով կարելի լի վերացնել հակառակորդի ողային հարձակման հետևանք-
ները:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ

Պաջ-ավելաքիմի խնդիրները հակողային և քիմիական պաշտպանու- թյան գործում	3
Ոդային հարձակման միջոցները	5
Ինչպես ճանաչիլ թվ	6
Ինչ պետք ե անել ողային և քիմիական վտանգի ազդանշանները տալու գեպքում	8
Բե են հակագաղի նշանակումն ու կազմությունը	10
Բե են հակագաղից ոգտվելու ձեր	12
Հասարակ գաղապաստարանի սարքավորումը	13
Ինչպես գուրս գալ վարակված վայրից	14
Կենսամթերքների, ջրի և այլ առարկաների պահպանումը թվ ներ- գործությունից	15
Գաղահանման հիմնական միջոցները	16
Թունավոր նյութերով վարակվելու նշանները. ինքնոգնություն և փոխագարձ ոգնություն թվ վարակվելու գեպքում	19
Անհատական հակախպրիտային և վիրակապական կապոցից ոգտվելը, արհեստական շնչառության կատարումը, արյունհոսությունը կանգ- նեցնելը և վերքի կապելը, տուժածներին փոխադրելը	24
Ինչպես նվազեցնել հրդեհի վտանգը տան մեջ	26
Ինչպես պետք ե պայքարել հրձիգ ոռոմքից ծագած հրդեհի դեմ . .	27
Ինչպես ոգտվել ձեռքի հրամարիչներից	27
Տան ՀՈԲՊ—ի լիազորի պարտականությունները	27
Ինքնապաշտպանության խմակների դերն ու խնդիրները	29

ՀՀ Ազգային գրադարան



NL0270829

ԳԻՒԸ 35 Կ.

13.36.6

БУДЬ ГОТОВ
К ПРОТИВОВОЗДУШНОЙ
И ХИМИЧЕСКОЙ
ОБОРОНЕ

Составлено

А. Мальшинским

Гиз ССР Армении, Ереван, 1986 г.